

ԱՅԴԻ ՊՐՈՑԵՍՄԵՆԳ ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՅԴԻ ՊՐՈՑԵՍՍԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
Բաժնետիրոջը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՅԴԻ ՊՐՈՑԵՍՍԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ Էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր Էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն ՖՀՄ Չափապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Չափապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնագրքի* (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որը կիրառելի է հանրային հետաքրքրությունները ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի Էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են հանրային հետաքրքրությունները ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին: Մենք պահպանել ենք նաև Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

- ▶ Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ▶ Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- ▶ Քնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- ▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված Էական անորոշություն, որը կարող է Էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է Էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ Քնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն՝




Էրիկ Հայրապետյան

Աուդիտի բաժնի գործընկեր՝



Դմիտրո Յուրգելևիչ



2026թ. հունիսի 19

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար դրամ	Ծան.	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Կանխավճարներ	5	191,721	42,920
Հիմնական միջոցներ	7	136,030	1,262
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	6	99,270	110,811
Ոչ նյութական ակտիվներ	8	359,815	759
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		786,836	155,752
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4	175,236	184,555
Կանխավճարներ	5	6,494	-
Այլ ակտիվներ		1,562	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		183,292	184,555
Ընդամենը ակտիվներ		970,128	340,307
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	11	1,000,000	200,000
Չգրանցված կանոնադրական կապիտալ		-	100,000
Կուտակված վնաս		(236,785)	(100,728)
Ընդամենը սեփական կապիտալ		763,215	199,272
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	6	97,771	105,416
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	32,388	9,579
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		130,159	114,995
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	6	7,644	6,082
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	69,110	19,958
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		76,754	26,040
Ընդամենը պարտավորություններ		206,913	141,035
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		970,128	340,307

Ստորագրվել և վավերացվել է թողարկման համար Ընկերության ղեկավարության կողմից՝

Հրանտ Սաֆաթյան

Գործադիր տնօրեն



Համիկ Հախոբյան

Գլխավոր հաշվապահ

2026թ. հունիսի 19

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար դրամ	Ծան.	2024թ. մայիսի 13 – 2024թ. դեկտեմբերի 31	
		2025թ.	
Վարչական և այլ գործառնական ծախսեր	13	(135,708)	(94,708)
Գործառնական գործունեության արդյունքներ		(135,708)	(94,708)
Տոկոսային եկամուտ		4,221	–
Ֆինանսական ծախսեր	14	(4,570)	(6,020)
Չուտ ֆինանսական ծախսեր		(349)	(6,020)
Վնաս մինչև շահութահարկով հարկումը		(136,057)	(100,728)
Շահութահարկի գծով ծախս	9	–	–
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս հարկումից հետո		(136,057)	(100,728)

ՍԵՓԱԿԱՆ ԿԱԳԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Զգրանցված կանոնադրա- կան կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
2024թ. մայիսի 13 (հիմնադրման օր)	–	–	–	–
Չուտ վնաս և ընդամենը համապարփակ վնաս ժամանակահատվածի համար	–	–	(100,728)	(100,728)
Ընդամենը համապարփակ վնաս ժամանակահատվածի համար	–	–	(100,728)	(100,728)
Կանոնադրական կապիտալի ավելացում (Ծան. 11)	200,000	100,000	–	300,000
2024թ. դեկտեմբերի 31	200,000	100,000	(100,728)	199,272
Չուտ վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	–	–	(136,057)	(136,057)
Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	–	–	(136,057)	(136,057)
Կանոնադրական կապիտալի ավելացում (Ծան. 11)	800,000	(100,000)	–	700,000
2025թ. դեկտեմբերի 31	1,000,000	–	(236,785)	763,215

ԳՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար դրամ	Ծան.	2025թ.	2024թ. մայիսի 13 – 2024թ. դեկտեմբերի 31
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Անձնակազմի գծով վճարումներ		(75,646)	(38,366)
Այլ գործառնական ծախսեր		(48,556)	(21,383)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Կանխավճարներ		(19,893)	–
Այլ ակտիվներ		(1,562)	–
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		16,605	–
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր՝ նախքան շահութահարկի վճարումը			
		(129,052)	(59,749)
Վճարված շահութահարկ		–	–
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր			
		(129,052)	(59,749)
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Տոկոսային եկամուտ		4,221	–
Հիմնական միջոցների ձեռքբերում		(109,924)	(44,938)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(463,950)	(801)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական հոսքեր			
		(569,653)	(45,739)
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր կանոնադրական կապիտալի ավելացումից		700,000	300,000
Վճարված տոկոսներ	6	(3,400)	(5,254)
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	6	(6,083)	(4,681)
Զուտ դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
		690,517	290,065
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ			
		(8,188)	184,577
Փոխանակման փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա			
		(1,131)	(22)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ			
		184,555	–
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ			
	4	175,236	184,555

Կից 1-ից 17 ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը: